«Գնում ենք Փարիզի Դիսնեյլենդ» արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 Ֆիզիկական անձանց Visa տեսակի քարտերի (այսուհետ՝ Քարտ), քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Արշավի շրջանակում պարգևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

2.4 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.5 Հաղթող մասնակիցը հաստատվում է Կազմակերպչի կողմից՝ Քարտապանի նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե Քարտապանը հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա տվյալ մասնակցի հաղթանակը կարող է չեղյալ համարվել:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Արշավի շրջանակում սույն թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2026թ. փետրվարի 27-ը ներառյալ Հայաստանում և արտերկրում Քարտով իրականացված դրամային կամ արտարժութային վճարային գործառնություններ (այսուհետ՝ Գործառնություն) կատարելու դեպքում Քարտապանները կստանան պարգևատրումներ (այսուհետ՝ Պարգևատրում) ստորև նշված սահմանաչափերին ու պայմաններին համապատասխան.

Այն Քարտապանների համար, ովքեր արշավի իրականացման ընթացքում մեկ Քարտով կկատարեն առնվազն 5 հատ՝ յուրաքանչյուրը նվազագույնը 15,000 ՀՀ դրամի (կամ համարժեք արտարժույթ) Գործառնություն, Կազմակերպչի կողմից կկազմակերպվի գովազդային վիճակախաղ (այսուհետ՝ Վիճակախաղ), որի արդյունքում հաղթող 2 Քարտապաններից յուրաքանչյուրին կտրամադրվի դեպի Փարիզ հնգօրյա ճանապարհորդություն (այսուհետ՝ Պարգևատրում), որը կներառի հետևյալը.

- Ընտանիքի 4 անդամների համար էկոնոմ դասի երկկողմանի ավիատոմսեր (Երևան-Փարիզ-Երևան),
- 2 գիշերվա կացություն 4 անձի համար Disneyland® Paris-ի հինգաստղանի հյուրանոցում՝ ներառյալ նախաճաշը,
- Disneyland® Paris Park-ի և Walt Disney Studios-ի 3 օրվա մուտքի տոմսեր,
- VIP տուր 2-րդ օրվա համար,
- Disneyland® Paris-ի նվեր քարտեր՝ ընդհանուր 1 000 եվրո արժողությամբ,
- Լուսանկարահանման հնարավորություն,
- Բրենդավորված նվերներ,
- 3 գիշերվա կացություն 4 անձի համար Փարիզի կենտրոնում գտնվող հինգաստղանի հյուրանոցում՝ ներառյալ նախաճաշը,
- Նախապես ամրագրված ճաշ և ընթրիք Փարիզում,
- Փարիզի տեսարժան վայրերի անցատոմս և հասարակական տրանսպորտի քարտ,
- Օդանավակայանի անհատական տրանսֆերներ Փարիզում և տեղափոխում Disneyland® Paris-ից դեպի Փարիզի հյուրանոց 3-րդ օրը:

3.2 **Քարտից քարտ փոխանցումները, քարտով կատարված կոմունալ վճարումները, բանկային հաշիվների միջև փոխանցումները, ապահովագրական ընկերություններին կատարված վճարումները (ASWA), էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքները, բուքմեյքերական ընկերություններին, տոտալիզատորների կազմակերպիչներին, տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին կատարված փոխանցումները, խաղային հաշիվների համալրումը և/կամ խաղադրույքների կատարումը չեն դիտարկվի որպես Գործառնություններ:**

3.3 Սույն Պայմանների 3.1 կետի պայմաններին յուրաքանչյուր անգամ բավարարելու դեպքում Քարտապանի տվյալները նույնքան անգամ կներառվեն Վիճակախաղի ցանկում:

3.4 Գործառնությունների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվում Գործառնության կատարման ամսաթիվը: Որպես գործառնության կատարման ամսաթիվ է դիտարկվում Քարտի քարտային հաշվի քաղվածքում տվյալ գործարքի կատարման ամսաթիվը:

3.5 Կից Քարտերի Քարտապանները չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ: Կից Քարտերով կատարված Գործառնությունները գումարվում են հիմնական Քարտերով կատարված Գործառնություններին:

3.6 Այլ վճարային համակարգի լրացուցիչ քարտերով կատարված Գործառնությունները չեն դիտարկվում որպես Գործառնություն:

3.7 Այլ համակարգի վճարային քարտին կցված լրացուցիչ Քարտով կատարված Գործառնությունները դիտարկվում են որպես Գործառնություն:

3.8 Արշավի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդին կտրամադրվի սույն Պայմաններով սահմանված առավելագույնը մեկ Պարգևատրում:

3.9 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման, փոխանակման գումարի հետ կամ Քարտապանի կողմից փոխանցման այլ անձի:

3.10 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Պարգևատրման որակի և մատուցված ծառայության համար:

3.11 Սույն Պայմանների 3.1 կետում նշված Վիճակախաղի հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ https://commentpicker.com):

3.12 Վիճակախաղը կցուցադրվի Բանկի ֆեյսբուքյան էջով՝ ուղիղ հեռարձակմամբ: Հեռարձակման օրը և ժամը կհրապարակվեն նախապես Կազմակերպչի ֆեյսբուքյան էջում:

3.13 Վիճակախաղը կկազմակերպվի մինչև 2026թ. մարտի 20-ը ներառյալ:

3.14 Հաղթող մասնակիցը ինքնուրույն պետք է հոգա ճամփորդության հետ կապված բոլոր այն ծախսերը, որոնք ներառված չեն Պայմանների 3.1 կետում:

3.15 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում ճանապարհորդության երկիր մեկնելու համար նախատեսված մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի համար: Մասնակցին կամ նրա ընտանիքի անդամներին դեսպանատան/հյուպատոսության կողմից տվյալ երկրի մուտքի արտոնագրի (վիզայի) չտրամադրման, ինչպես նաև մասնակցի՝ մեկնման անհնարինության դեպքում Կազմակերպչի կողմից չի սահմանվում որևէ փոխհատուցում:

3.16 Վիճակախաղի ընթացքում հաղթող Քարտապաններից բացի պատահականության սկզբունքով կընտրվեն ևս 10 մասնակիցներ: Հաղթող ճանաչված Քարտապանի կողմից Վիճակախաղի համար նախապես հայտարարված պայմաններին չբավարարելու, Պարգևատրումից հրաժարվելու կամ Բանկի կողմից հաճախորդի հետ տասն աշխատանքային օրերի ընթացքում կապ հաստատելու անհնարինության դեպքում, նախապատվությունը կտրվի հաջորդ պահուստային մասնակցին՝ ըստ մասնակցի անվան դուրս բերման հերթականության:

3.17 Հաղթող մասնակցի Քարտը Վիճակախաղի և Պարգևատրման տրամադրման պահին պետք է լինի գործող:

3.18 Վիճակախաղի հաղթողներին Պարգևատրումը տրամադրելու նպատակով Բանկի աշխատակիցը հեռախոսազանգի կամ էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի կամ SMS հաղորդագրության միջոցով կապ կհաստատի վերջինիս հետ:

3.19 Պարգևատրումը կարող է օգտագործվել մինչև 2026թ. նոյեմբերի 30-ը և սույն Պայմանների 3.1 կետում նշված ճանապարհորդությունը պետք է ավարտվի այդ ժամկետում:

3.20 Սույն Պայմանների 3.1 կետում նշված հաղթողները պետք է մինչև 2026թ. մարտի 25-ը տեղեկացնեն Կազմակերպչին սպասվող ճանապարհորդության նախընտրելի երեք տարբեր ամսաթվերի մասին: Ընդ որում՝ ճանապարհորդության ամսաթիվը պետք է հաստատվի Disney-ի կողմից: Ճանապարհորդության ամրագրումից հետո որևէ փոփոխություն չի թույլատրվի:

3.21 Վիճակախաղի հաղթողների անձնական տվյալները (անուն, ազգանուն և կոնտակտային տվյալներ) կարող են փոխանցվել Պարգևատրման տրամադրումը կազմակերպող կողմերին՝ այդ թվում Visa վճարային համակարգին և Disney ընկերությանը:

3.22 Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:

3.23 Քարտապանի կողմից Արշավի շրջանակում հաշվարկված և Պայմանների 3.1 կետում նշված սահամանաչափի վրա ազդող Գործառնությունների հետվճարներ լինելու պարագայում Բանկն իրավունք ունի չեղյալ համարել Քարտապանի մասնակցությունը:

3.24 Բանկի, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ-ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ԵՎ «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող հանդիսանալ Արշավի մասնակից: Վերջիններս չեն կարող ընտրվել նաև Քարտապանի կողմից որպես ընտանիքի անդամ:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: